



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2019 թ.

<<ԷՏՔ>> ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹԵՐՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
Ս. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ձեր 04.05.2019թ. գրությանը

Հարգելի տիկին Ղուկասյան

Համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացվող ծառայողական ավտոմեքենաների թվաքանակը սահմանված է 9 ավտոմեքենա: 2018 թվականին ՀՀ Լոռու մարզպետարանի հաշվեկշռում հաշվառված էր յոթ ծառայողական ավտոմեքենա: ՀՀ կառավարության 2018թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 1500 որոշման համաձայն 14.03.2019թ.-ին ԳԱԶ-3110 մակնիշի ավտոմեքենան հանձնվել է պետական գույքի կառավարման կոմիտեին, հետագայում օտարելու նպատակով, որի արդյունքում ամսական կտրվածով միայն տվյալ տրանսպորտային միջոցի հաշվին տնտեսվել է 210լ բենզին, 86.3 հազ. դրամ գումարի: Վարորդը ազատվել է աշխատանքից, այլ աշխատանքի անցնելու հետ կապված տեղեկություն չունենք:

2019թ. բյուջեով առաջին կիսամյակի համար ՀՀ Լոռու մարզպետարանի պահպանման ծախսերով նախատեսված է <<Տրանսպորտային նյութեր>> հոդվածով 4377.6 հազ. դրամ: Մրցույթի արդյունքում կնքվել է 3953.6 հազ. դրամի պայմանագիր, համաձայն որի առաջին կիսամյակում պետք է ձեռք բերել 9600 լիտր բենզին: 2019թ. մայիսի 1-ի դրությամբ փաստացի ծախսը կազմել է 4810 լիտր:

Այս պահին ՀՀ Լոռու մարզպետարանի հաշվեկշռում հաշվառված է վեց ծառայողական ավտոմեքենա, որից թվով 3 ծառայողական ավտոմեքենա նույնպես պետք է հանձնել պետական գույքի կառավարման կոմիտեին: Նշված ավտոմեքենաների օտարման

համար անհրաժեշտ փաստաթղթեր արդեն հանձնվել են պետական գույքի կառավարման կոմիտեին, առաջիկա օրերին կհանձնվեն նաև ավտոմեքենաները:

Կից ներկայացնում եմ տեղեկատվություն գործող ծառայողական ավտոմեքենաների մասին:

Առդիր 1 թերթ:

Հարգանքով՝

 Invalid signature

X 

ԱՆՂԻԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ